Զ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՋԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

891 995
Մ-34

ՊԵՏՀՐԱՏ

891.99ս
Ս-34
ԱՐ

2011-07

Զ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՔԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

Նկարները՝
Ան. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

15.06.2013

11127

Գլխ. խմբագիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

4719
38

Գլավլիտի լիազոր Հ—3504. Հրատ 4486.
Գրավոր 161, Տիրաժ 4000.
Թուղթ 62×94 Տպագր. 1/2 մամ.
Մեկ մամ. 19200 նիշ. Հեղինակային 1/4 մամ.
Հանձնված է արտադրության 10 փետրվարի 1938
Ստորագրված է տպագրության 8 մայիսի 1938

Գետհրատի I տպարան Երևան. Լենինի փողոց № 65

Ես վոր պատմում եմ, պատահել է սրանից վաթսուն տարի առաջ։ Մի որ իմ հորեղբայրը՝ վորսկան Ոսեփը ինձ իր հետ վորսի տարավ։

Գնացինք Դամբլուտ կոչվող հանդամասը։

Այդ հանդամասը հեռու յեր և յես հոգիվ եյի գնում հորեղբորս յետևից։ Բայց՝ քաջ գիտեյի, վոր նա աննպատակ կերպով եսքան հեռու չի գնա և որ չի պատահել, վոր վորսկան Ոսեփը դատարկ ձեռքով տուն գա վորսատեղից։

Ուր վոր գնար, վորս պիտի ունենար։

Մենք անցանք Դամբլուտի տակով հոսող առվակն ու նոր եյինք անտառ մտել, յերբ հորեղբայրս կանգ առավ ու ինձ դիմելով, ասաց.

— Արշակ, տեսնում ես, ա՛յ, արջը տանձ ա հավաքում։

Ասաց ու մատով ցույց տվեց մեզանից վոչ շատ հեռու գտնվող բացուտն ու տանձի հաստաբուն ծառը։ Նայեցի այն կողմ։ Նկատեցի հաստաբուն ծառի տակ հանգիստ կերպով տանձ խժռող արջին։ Սիրտս դող ընկավ։ Յես զգացի, վոր վախից գունատվեցի։

Նայեցի հորեղբորս դեմքին,—շատ ուրախ եր։

Նա միքիչ եւ կանգնած մնաց, զննեց արջին և բաժանող տարածությունը և դարձավ դեպի ինձ։

— Հիմա կմոտենանք արջին։ Յես կկրակեմ։ Վոր վրիպի, դու իսկույն կվազես ու կբարձրանաս ծառը. թե չե արջը վոր կրակոց լսեց ու կենդանի մնաց, վայն եկել տարել է նրա ճանկն ընկնողին։

— Բա դու ինչ կանես,—հարցրի յես, նախազգալով, վոր հորեղբայրս մեծ վտանգի կենթարկվի այդ դեպքում։

— Յես իմ գլխի ճարը կտեսնեմ,—պատասխանեց հորեղբայրս ու մենք զգուշությամբ, բարձր խոտերի ու ծառերի միջով սողալով սկսեցինք մոտենալ գազանին, վոր մրթմրթալով շարունակում եր ուտել վայրի տանձը։

Արդեն շատ մոտ եյինք գազանին։

Արջը կարծես թե կերահաս վտանգ զգաց և մի պահ դադարելով ուտել, կասկածոտ հայացքով չորս կողմը նայեց, հետո շարունակեց իր գործը։ Իմ վախը քանի գնում ավելանում եր։

Հորեղբայրս կամացուկ դուրս յեկավ կաղնի ծառի ընի յետևից ու նշան բռնեց։ Սիրտս սկսեց արագ-արագ խփել։

Դեռ չեր լսվել հորեղբորս հրացանի կրակոցը, յերբ յես շտապեցի մոտիկ ծառը բարձրանալ։ Քիչ հետո ամբողջ անտառը թնդաց կրակոցից։

Դրանից հետո լսեցի արջի ուժգին զոռոցը, վախից մազերս փշաքաղվեցին։ Քիչ մնաց ծառից վայր ընկնեմ։

Բայց վախս կրկնապատկվեց և լեզուս կապ ընկավ, յերբ հանկարծ տեսա, վոր արջը գոռալով յետևի վոտքերի վրա բարձրացած, փրփուրը բերնին, թռավ դեպի հորեղբայրս։

Հորեղբորս ձեռքին ել չախմախլու կոչվող հնամյա մի հրացան եր, վոր արձակում եր կայծքարի միջոցով։ Ամեն անգամ կրակելուց հետո պիտի

վառոդ ու կոտորակ լցնեյիր փողի մեջ, փողի բերանը փակեյիր, հետո կայծքարն ամրացնեյիր... Իսկ այս բոլորը յերկար ժամանակ եր խլում։

Խեղճ հորեղբայրս չկարողացավ ժամանակին լցնել հրացանը և յես սարսափով տեսա, թե ինչպես

այդ ահռելի գազանը իր թաթերի մեջ առավ հորեղբորս և բացելով մեծ, փրփրակալած բերանը, բռնեց նրա ուսից։

Խեղճ հորեղբայրս փորձում, չարչարվում եր, վոր ձեռքը տանի դեպի իր դաշույնը, բայց չեր կարողանում։

Արջը թույլ չեր տալիս։

Հորեղբայրս սկսեց ձեն տալ, ոգնություն կանչել.

— Արշակ հե՛յ...

— Ոգնեցեք, ո՞վ կա, ոգնեցեք ա խալխ, արջն ինձ բռնել ա՛...

Հորեղբորս աղեկտուր ու խղճալի ձայնն ինձ սթափեցրեց։ Ծառից իջա։ Բայց վախենում եմ մոտ գնամ։

Արջն ու հորեղբայրս կոխ են բռնել։

Արջը խեղճ մարդուն վայր է գցում գետին, իր թաթերով քոլոլում, քոլոլում, գցում, հետո վոտքի կանգնեցնում, ելի գցում, քոլոլում...

Ոսեփը տեսնելով, վոր վոչնչով չեմ կարողանում իրեն ոգնել, այս անգամ ավելի զորեղ ձայնով սկսեց ոգնություն կանչել.

— Ա՛ խալխ, փրկեցեք ա խալխ, արջն ինձ բռնելա՛ — ա՛-ա-ա — մոտակա ձորից լսվեց արձագանքը։

Ելի աղաղակեց ու կանչեց։

Հորեղբորս ձայնն ավելի վորոտի նման տարածվեց ամբողջ անտառում ու խուլ արձագանք տվեց հեռվում։

Հրաշք եր, ինչ եր։

Մի քանի վայրկյան հետո մի խուլ ձայն ենք լսում.—գալիս ենք, պինդ կաց, գալիս ենք,—հեռվից մեզ եր հասնում մի կանչ, վորը միշտ կրկնվում եր և հետզհետե ավելի մոտ եր թվում ու ավելի պարզ եր լսվում։

Հասկացա վոր յեկողները հովիվներ՝ պիտի լինեն։

Հանկարծ թանչ տալով վրա հասան վեց գամփռներ։ Դրանցից մեկը, վոր բոլորից գազազածն ու անվախն եր, թռավ ու արջի ականջիցը բռնեց։ Մյուսներն ել սկսեցին յետևից գզել, կծել գազանին։

Դրանք ոգնության հասնող հովիվների շներն էին։

Քիչ հետո վրա հասան և իրենք՝ հովիվները։ Նրանցից մեկին յես վայրկյանապես ճանաչեցի։

Սարգիսն էր։

Եղ աժդահակն էլ ժամանակ չկորցրեց, հասնելուն պես զամբն հանեց ու ձեռքի ամբողջ ուժով արջի կռնատակը խրեց։

Արջը մի անգամ սարսափելի գոռաց և բերանից արյան ուժեղ հոսանք դուրս թափվեց։

Սարգիսը զամբով մի հարված էլ տվեց յերերացող արջին։ Գազանը մի անգամ էլ գոռաց ու գետին փռվեց։

Եղ գազանը հորեղբորս ուսն արյունվա յեր արել, բայց ուրախ էինք, որ նա կենդանի մնաց։

Հորեղբայրս վոտքի կանգնեց ու սրտի խորքից ասաց.—փառք քեզ կյանք, ես անգամ էլ կենդանի մնացի...

Ամեն անգամ, յերբ սարսափելի ու գիշատիչ գազանների ճանկերից ազատվում եր, այդ խոսքերն եր կրկնում հորեղբայրս։

Դրանից հետո տարիներ անցան։ Հորեղբայրս էլի շատ արկածների հանդիպեց, նրա հետ հաճախ և յես, միասին շատ արջեր ու գազաններ սպանեցինք, բայց եղ մի որը մտքիցս չի հեռանում։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԼՈՒՍ. ՊՐԱ.
Գ. Լ. ՄԱՍԻՍՅԱՆ
ԵՐԵՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0402427

389

11127

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

З. МАРГАРЯН

КОГТЯХ МЕДВЕДЯ

ГИЗ АГМ. ССР. ЕРЕВАН